ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Տեղեկացվում է Ձեզ, որ <<Նոր Արմավիրի միջնակարգ դպրոց>>պետական ոչ առևտրային կազմակերպության խորհուրդը կայացրել է որոշում տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելու մասին:

Մրցույթը կկայանա 2020թվականի հուլիսի 15 -ին ժամը 10^{00}-ին:

Կից ներկայացվում են՝ քաղվածք կառավարման խորհրդի համապատասխան նիստի N 3 արձանագրությունից և հայտարարության տեքստը:

Առդիր 2 թերթ:

Խորհրդի նախագահ՝ **Ա.Ավետիսյան**

20 <<05>>2020թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 01-09510-2020
20 05 2020թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի <<ՆորԱրմավիրի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1.ՀՀ քաղաքացիությունը,

2.բարձրագույն կրթությունը,

3.ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր) :

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1.դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով,

2.ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,

3.հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը,

4.կվյալ հաստատության զարգացման ծրագիրը (ներկայացնել մրցույթից առնվազն երեք օր առաջ),

5.հրապարակված հոդվածներից ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում),

6.աշխատանքային գրքույկի պատճենը:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2020թ. հունիսի 7-ից մինչև հուլիսի 6-ը ներառյալ, ամեն օր ժամը 10^{00}-ից մինչև 15^{00}-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից, <<Նոր Արմավիրի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2020թվականի հուլիսի 15-ին ժամը 10^{00}-ին <<Նոր Արմավիրի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում:

Հասցե՝ Արմավիրի մարզ, Նոր Արմավիր համայնք, Մաշտոցի փողոց. թիվ 14 շենք

Տեղեկությունների համար զանգահարել 093877742 հեռախոսահամարով

<<ՆորԱրմավիրի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ

կառավարման խորհուրդ

Քաղվածք

<<ՆՈՐ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2020Թ. ՄԱՅԻՍԻ 20-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ N 3 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ԼՍԵՑԻՆ.

Համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի <<Նոր Արմավիրի միջնակարգ դպրոց>>պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելու հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. <<Նոր Արմավիրի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի համար անցկացնել մրցույթ:

   Մրցույթը նշանակել 2020թ.հուլիսի 15-ին ժամը 10^{00}-ին:

   Խորհրդի որոշումը ներկայացնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին և ՀՀ Արմավիրի մարզպետին:

Խորհրդի նախագահ՝ **Ա.Ավետիսյան**